

Մեղավոր

Երբևէ հիասթափեցրե՞լ ես մեկին, ով հույսը քեզ վրա էր դրել: Մեղքը «դաջված է» քո դեմքին, կորցրել ես ուրախությունը և չես կարողանում առանց մեղավորության կամ ամոթի զգացման նույնիսկ աղոթել կամ Աստվածաշունչ կարդալ:

Մեղավոր՝ Դու մեղավոր ես, եթե նույնիսկ մարդիկ դա քո դեմքին չեն ասում. դու գիտես, զգում ես, որ ուրիշներին են այդ մասին ասում կամ դատում են քեզ իրենց սրտերում, ու չես կարող որևէ բան անել այդ ամենի դեմ:

Մեղավոր՝ Հենց սա է կյանքում ձախողումներ կրած բազում անհատների չբարձրաձայնված վճիռը: Ինչպես Պետրոս առաքյալը հայտնաբերեց, Աստծո ներումը մոտ է այնքան, որքան աղոթքը.

«Եվ Պետրոսը հիշեց Հիսուսի այն խոսքը, որ ասաց. «Աքաղաղը դեռ չկանչած՝ երեք անգամ կուրանաս Ինձ», և դուրս գնաց ու դառնապես լացեց» (Մատթեոս 26.75):

Երբևէ պատահե՞լ է, որ դու Պետրոսի նման քեզ մեղավոր, հուսահատ ու ամոթահար զգաս ու չիմանաս, թե ինչ կարելի է անել: Ամոթով ու խղճի խայթով երբևէ գլուխդ խոնարհել և շնջացե՞լ ես. «Աստված իմ, ողորմի՛ր ինձ»:

Սիրելի՛ ընթերցող, ինձ ծանոթ են այդ զգացումները: Հիշեցնեմ, որ երբ այլևս չես կարողանում մեղավոր աչքերով Աստծուն նայել, համոզված եղիր, որ Աստված շարունակում է քեզ նայել ոչ թե զայրացած ծնողի բարկությանբ, այլ կարեկցանքով ու սրտացավությանբ, սիրով ու քնքշությամբ: Եվ երբ Նրանից անգամ ներում չես ակնկալում, Նա Իր շնորհն ու սերը քեզ է տալիս և հիշեցնում, որ դու Իրենն ես: Նա հոգ է տանում քեզ համար, սրբում է ամոթահարության արցունքներդ և խրախուսում է նորից փորձել: Եթե աչքերդ այսօր լի են մեղավորության ու ձախողվածության արցունքներով, վազի՛ր երկնավոր Հորդ ընդառաջ, նետվի՛ր Նրա գիրկը: Նա քո ողբը կվերածի ուրախության արցունքների:

Պարզապես հիշի՛ր.

«Եթե Որդին ազատի ձեզ, ուրեմն հիրավի ազատ կլինեք» (Հովհաննես 8. 36):

«Ուստի հիմա դատապարտություն չկա Հիսուս Քրիստոսի մեջ լինողների համար, որ մարմնավորապես չեն վարվում, այլ հոգևորապես» (Հռոմեացիներին 8.1):